

1 Արյան դոնորություն

Ինչո՞ւ մենք ունենք դոնորական արյան կարիք

- արյունը հնարավոր է ստանալ միայն մարդուց
- արյունը անհրաժեշտ է մարդկանց, որոնք կորցրել են իրենց արյան մի մասը
- ամեն օր օգտագործվում է մեծ քանակով արյուն և արյան բաղադրիչներ, հետևաբար նույն քանակով մարդ (դոնոր) անհրաժեշտ է այն իրականացնելու համար

Արյան դոնորության գործընթացը

Սովորաբար առողջ տղամարդը կարող է առանց որևէ բացասական հետևանքի և դժվարության տարեկան 4 անգամ հանձնել արյուն և փրկել առնվազն 4 կյանք, իսկ առողջ կինը դա կարող է անել տարեկան 3 անգամ, առանց վտանգելու սեփական առողջությունը: Արյան հանձնումը երկար չի տևում, 10-20 րոպե, որի ընթացքում մարդու երակից հավաքվում է 450-500 միլիգրամ արյուն: Արյան այս քանակը մարդու օրգանիզմը կարճ ժամանակահատվածում վերականգնում է: Հարկավոր է հիշել, որ 1 միավոր, այսինքն 500 միլիգրամ արյունը կարող է փրկել 3 կյանք, հետևաբար, եթե դուք հանձնում եք արյուն տարեկան 3 անգամ՝ կարող եք փրկել 9 կյանք: Ցավոք, ինչպես արդեն նշվեց, արյան դոնորների թիվը միշտ ավելի սակավ է քան կարիքը, բացի այդ տարիքն առնելով դոնորների մի ստվար մաս դուրս է գալիս այս գործընթացից: Կարևոր է նաև նշել, որ մարդիկ որոնք պատկանում են միևնույն էթնիկական խմբին, ունեն ավելի մեծ հավանականություն հանդիսանալու դոնոր տվյալ խմբի համար:

Դոնորական արյան անվտանգության ապահովումը

Ամբողջ դոնորական արյունը ստուգվում է արյան միջոցով տարածվող ինֆեկցիաների նկատմամբ (ՄԻԱՎ/ՉԻԱՀ, հեպատիտներ, սեռավարակ հիվանդություններ), վարակված արյուն հայտնաբերելու դեպքում այն ոչնչացվում է, իսկ դոնորը այլևս չի հանդիսանում արյան ստացման աղբյուր: Այս գործընթացը խիստ կարգավորված է և մշտապես գտնվում է հսկողության տակ, որը և երաշխավորում է դոնորական արյան ապահովությունը: Հասկանալի պատճառներով արյան դոնորների քանակը համարվում է երկրի զարգացվածության և առողջապահության մակարդակի կարևոր ցուցանիշներից մեկը: Դոնորական արյունը կիրառվում է մի շարք ծանր հիվանդությունների դեպքում, իսկ քաղցկեղով և արյան հիվանդություններով տառապողների մոտ կիրառումը խիստ անհրաժեշտ է: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով դոնորների սահմանափակ մասնակցությունը, արյունը միշտ հանդիսանում է խիստ դեֆիցիտ բուժական միջոց: Լավագույն դեպքում զարգացած երկրներում արյան դոնորագրումը կատարվում է բնակչության մոտ 4% չափով, իսկ Հայաստանում նման մարդկանց մասնակցությունը ավելի նվազ է քան 1%:

2 Օրգանների դոնորություն

Օրգանների դոնորագրությունը և դոնոր օրգանով բուժումը բժշկության մեջ հայտնի է բավական երկար տարիներ և մի շարք օրգանների առումով (երիկամ, լյարդ, թոք, սիրտ) վերջին տարիներին խիստ աճել է, մասնավորապես 1954թ-ից հետո: Այդ ժամանակաշրջանից նման բուժումը դարձել է արդյունավետ և փրկել է բազմաթիվ մարդկանց կյանք: Հենց դա է պատճառը, որ աշխարհում աճել է դոնորական օրգանների պահանջարկը: Օրգանների դոնորագրության ասպարեզում նույնպես խստագույնս ապահովված է դոնորի առողջությունը և նրա շահերը: Հետաքրքիր է նշել, որ Եվրոպայում, ինչպես ցույց են տալիս կատարված հետազոտությունները, մարդկանց մոտ 40% քննարկել է այդ թեման իրենց ընտանիքներում և փորձել հետևություններ անել այդ ամենի մասին: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մասնավորապես Մեծ Բրիտանիայում այն հարցին, թե կարիքի դեպքում կընդունե՞ք արդյոք այլ մարդու օրգան, մեծամասնությունը դրական պատասխան է տվել: Սակայն նույնիսկ այդ երկրում մարդկանց թիվը, որոնք պաշտոնապես համաձայնել են կարիքի դեպքում դառնալ օրգանների դոնոր, չի գերազանցում 30%: Մասամբ նման անբավարար մասնակցությունը, բացատրվում է տեղեկատվության սահմանապակ լինելու պատճառով, թե առանձին անձանց համար, թե ընտանիքների համար: Տեղեկատվության տարածումը և աշխատանքը ընտանիքների հետ հնարավոր է, որ կավելացնի օրգանների պոտենցիալ դոնորների քանակը: Այս ասպարեզում նույնպես հիվանդների մոտ դոնորական օրգանների պահանջարկը շատ ավելի բարձր է քան առաջարկը: Ավելի ցայտուն դա արտահայտված է ազգային փոքրամասնություններ կազմող խմբերում: Հարկ է նշել, որ աշխարհում ամեն օր մահանում են հիվանդներ, որոնք այդպես էլ չեն ստացել համապատասխան օրգանների փոխպատվաստում:

3 Ոսկրածուծի և ցողունային բջիջների դոնորություն

Ոսկրածուծի և ցողունային բջիջների փոխպատվաստումը նույնպես ժամանակակից բժշկության հաջողությունների շարքին է պատկանում: Ցողունային բջիջների պահանջարկը նույնպես շատ բարձր է: Բավական է նշել, որ ամեն օր 6.000 հիվանդ սպասում է նման փոխպատվաստման, չնայած նրան, որ կատարվում է տարեկան ավելի քան 40.000 փոխպատվաստում և տասնյակ հազարավոր հիվանդներ փրկվում են նման բուժման արդյունքում: Այդ հիվանդությունների մեծ մասը կազմում են արյան ծանր հիվանդությունները, որոնք չեն բուժվում այլ մեթոդների շնորհիվ: Ցողունային բջիջների փոխպատվաստման դեպքում խիստ նշանակություն ունի համապատասխան և համատեղելի դոնորի ընտրությունը: Ապացուցված է, որ միևնույն ազգային խմբերում համատեղելի դոնոր գտնելու հավանականությունը 2-3 անգամ ավելի բարձր է: Այն ընտանիքներում, որտեղ կան 4 և ավելի երեխաներ համապատասխան դոնոր գտնելու հավանականությունը ավելի մեծ է, քան 1 կամ 2 երեխա ունեցող ընտանիքներում: Պետք է նշել, որ ցողունային բջիջների դոնորությունը նույնպես անվտանգ է, ինչպես և արյան դոնորությունը: Այս բջիջները կարելի է ստանալ ինչպես արյան միջից, այնպես էլ

ողնածուծից, առանձին դեմքերում՝ հավաքել նորածին երեխայի պորտալարից: Ոսկրածուծի և ցողունային բջիջների փոխադասումը հնարավորություն է տալիս օգնել և նույնիսկ փրկել հիվանդներին, որոնց համար այլ հնարավորություն չկա:

Ինչպես դուք կարող եք դարձնել ցողունային բջիջների դոնոր

Դոնորագրվել կարող են 18-50 տարեկան անձինք, որոնք իրենց համարում են առողջ և ինքնակամ ցանկություն են հայտնում մասնակցել այդ գործընթացին:

Ցողունային բջիջներ հանձնելուց առաջ, այդ անձինք անցնում են բժշկական մանրամասն հետազոտություն, իրենց տրվում է հնարավորություն տալ հարցեր և ստանալ սպառիչ պատասխաններ:

Ցողունային բջիջների հանձնումն անվնաս է և որևէ մի բացասական հետևանքներ չունի: Հակառակը, դոնորը ստանում է դրական լիցքավորում և հպարտության զգացում, որ փրկել է մի մարդու կյանք:

Մեր կենտրոնում դոնորագրված են ավելի քան 25.000 անձինք, որոնք հետազոտված են և անհրաժեշտության դեպքում կարող են հանդիսանալ իբրև դոնոր :Մինչ օրս երկու տասնյակից ավել հայ և այլ ազգի հիվանդներ փրկվել են մեր կազմակերպությունում գրանցված դոնորների շնորհիվ: